Հիմնավորում

Մասիս քաղաքային համայնքի ավագանու 01.03.2022թվականի <<2022 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 36-Ն որոշմանը կից թիվ 1, 2, 3 և 4 հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին>> որոշման ընդունման

1. **Մասիս քաղաքային համայնքի 2022 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը**

2022 թվականի համայնքի բյուջեի վարչական մասում փոփոխությունը պայմանավորված է համայնքի վերակազմակերպման ընթացքում առաջացած մի շարք խնդիրների կարգավորման հետ կապված 2022 թվականի բյուջեում նախատեսված միջոցները ավելացնելու և առկա խնդիրներին լուծում տալու անհրաժեշտությամբ:

2. **Առկա խնդիրների նկարագրությունը**

Մասիս Համայնքի աղբահանության վճարների հավաքագրման գործընթացին պայմանագրային հիմունքներով մասնակիցների աշխատանքը համակարգելու նպատակով համայնքապետարանի հաստիքացուցակում համակարգող օպերատորի հաստիք նախատեսելու հետևանքով օրենսդիր և գործադիր մարմիններ գործառական դասակարգման աշխատավարձի հոդվածը ավելացնել 2520 000 դրամի չափով:

Նախկին համայնքապետարանների կողմից շահագործվող ավտոմեքենաները Մասիս համայնքին փոխանցելու հետևանքով պետական հաշվառման և գրանցման համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել միջոցներ՝ պետական գրանցման համար՝ 500 000 դրամ , պարտադիր ապահովագրության համար՝ 500 000 դրամ, տեխնիկական զննման համար՝ 110 000 դրամ:

Համայնքում դեռատիզացիոն և դեզինսեկցիոն ծառայություններ իրականացնելու համար բյուջեում նախատեսված միջոցները անհրաժեշտ է ավելացնել 900 000դրամով:

Մասիս համայնքի աշխատանքային գործունեությունը ապահովելու նպատակով թվով 30 հատ կնիքներ և դրոշմակնիքներ ձեռք բերելու համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 500 000 դրամ:

Մասիս Համայնքի 6-րդ թաղամասի 2-րդ փողոցի բնակիչների կողմից կան բազմաթիվ դիմումներ դեպի մայրուղի գնացող ճանապարհի անանցանելիության վերաբերյալ: Առկա խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է ճանապարհի ընթացիկ նորոգման համար բյուջեից հատկացնել 950 000դրամ:

Մասիս համայնքի վերակազմակերպումից հետո բնակավայրերից աղբահանության իրականացումը բարելավելու նպատակով կարիք կա աղբամանների թիվը ավելացնել 50 հատով, որի ձեռք բերման համար անհրաժեշտ է բյուջեից հատկացնել 1000 000 դրամ:

Մասիս համայնքի Գեղանիստ և Խաչփար գյուղերի մանկապարտեզներին FCN բարեգործական կազմակերպության կողմից կատարվել է մանկական գույքի նվիրաբերություն՝ 50 երեխայի համար, որի արժեքի 10%-ը կազմում է 290 000 դրամ, որը ըստ նվիրաբերության պայմանագրի պարտավոր է վճարել մանկապարտեզը: Մանկապարտեզների կողմից նշված գումարը վճարելու համար անհրաժեշտ է Խաչփարի մանկապարտեզին հատկացնել 140 000 դրամ և Գեղանիստ գյուղի մանկապարտեզին 150 000 դրամ լրացուցիչ սուբսիդիա:

,,Առաքելություն Հայաստան'' Բարեգործական կազմակերպությունը Մասիս համայնքում շարունակաբար իրականացնում է սոցիալապես անապահով բնակիչներին տաք սննդով ապահովելու ծրագիր, որի իրականացման համար բյուջեից ամեն տարի հատկացվում է նվիրաբերություն 1200 000 դրամի չափով: Բյուջեում առկա միջոցները նախատեսված է նախորդ տարվա պարտքի մարման համար: 2022 թվականի ծրագրին օժանդակելու համար անհրաժեշտ է նախատեսել լրացուցիչ 1200 000:

Հաշվի առնելով, որ 2022 թվականի բյուջեում ''Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ'' գործառական դասակարգման ''Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ'' հոդվածում առկա միջոցները կարող են բավարարել տարվա ընթացքում առաջացած խնդիրները լուծելու՝ առաջարկվում է նշված հոդվածից 10 873 000 դրամ նվազեցնել և ուղղել առաջացած խնդիրների լուծմանն ու անհրաժեշտ ծախսերին :

ՀՀ Կառավարության 24-ը մարտի 2022 թվականի թիվ 386-Ն որոշմամբ Մասիս համայնքի բնակավայրերում իրականացված մի շարք ծրագրերի գնման պայմանագրերի շրջանակում մարզպետարան ներկայացված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիմնան վրա հատկացվել է սուբվենցիաներ, որոնք են.

1. «Նորամարգ համայնքի կարիքների համար 15,6կվտ ֆոտովոլտային արևային կայանի կառուցում» 2911 900 դրամ
2. «Գեղանիստ համայնքի ոռոգման համակարգի կառուցում» 583 800 դրամ
3. «Ռանչպար համայնքի գազաֆիկացում» 1429 300

4. «Այնթապ համայնքի փողոցների հիմնանորոգման և հարթեցման աշխատանքներ 4 կմ» 16 588900 դրամ
5. «Գեղանիստ համայնքի 4-րդ փողոցի ասֆալտապատման աշխատանքներ» 295 600դրամ
6. «Նորաբաց համայնքի Երևանյան փողոցի ասֆալտապատման աշխատանքներ» 567000դրամ
7. .«Նորաբաց համայնքի արտաքին լուսավորության ցանցի վերակառուցման և արդիականացման աշխատանքներ» 562500 դրամ
8. «Այնթապ համայնքի ներհամայնքային փողոցների լուսավորության անցկացման աշխատանքներ» 570000 դրամ:

2021 թվականի ընթացքում գյուղական համայնքների կողմից իրականացված աշխատանքների համար ստացվել են սուբվենցիաներ և իրականացված աշխատանքների դիմաց կատարվել են վճարումներ 2022 թվականի վերակազմակերպման ժամանակահատվածում, որը անհրաժեշտ է ներառել Մասիս Համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերում.

1. «Այնթապ գյուղի ճանապարհի հիմնանորոգման աշխատանքներ» 8310000 դրամ
2. «Նորաբացի ճանապարհի հիմնանորոգում» 240000 դրամ:

Վերոնշյալ աշխատանքների համար հատկացված սուբվենցիաները անհրաժեշտ է ներառել համայնքի 2022 թվականի բյուջեի ֆոնդային մասի եկամուտներում և ծախսերում ընդհանուր 32059000 դրամ:

ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեի վարչական մասում եկամուտների և ծախսերի նվազեցումների և ավելացումների							
h/h	*բաժին*	*խումբ*	*դաս*	*Գործառական դասակարգում, նպատակ*	*հողված*	*Ծախսեր / հազար դրամ/*	*Եկամուտներ /հազար դրամ/*
1				Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ			-1002,00
2				Այլ գույքի վարձակալությունից մուտքեր			-1401,40

3	*01*	*6*	*1*	***Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.*** Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոդվածը նվազեցնել	4239	-10873,40	
4	*01*	*1*	*1*	***Օրենսդիր և գործադիր մարմիններ.*** Աշխատավարձի հոդվածն ավելացնել	4111	2520,00	
5				Ավտոմեքենաների պարտադիր ապահովագրություն	4215	500,00	
6				Ավտոմեքենաների պետական հաշվառման և գրանցման համար պարտադիր վճարներ	4823	500,00	
7				Ավտոմեքենաների տեխնիկական զննման համար	4823	110,00	
8				Դեռատիզացիոն և դեզինսեկցիոն ծառայությունների ծախսերն ավելացնել	4213	900,00	
9				Կնիքների ձեռք բերման համար գրասենյակային նյութերի ձեռք բերման հոդվածն ավելացնել	4261	500,00	
10	*04*	*5*	*1*	***Ճանապարհային տրանսպորտ.*** Մասիս քաղաքի 6-րդ թաղամասի 2-րդ փողոցի ընթացիկ նորոգման համար հատկացնել	4251	950,00	
11	*05*	*1*	*1*	**Աղբահանություն**. Աղբամանների ձեռք բերման համար կենցաղային նյութեր հոդվածն ավելացնել	4267	1000,00	
12	*09*	*1*	*1*	**Նախադպրոցական կրթություն.** Գեղանիստ գյուղի „Մանուշակ" և Խաչփար գյուղի մանկապարտեզներին գույքի նվիրաբերման 10 %-ի մասնակցության համար հատկացնել լրացուցիչ սուբսիդիա	4511	290,00	
13	*10*	*7*	*1*	**Սոցիալական հատուկ արտոնություններ.** „Առաքելություն Հայաստան" բարեգործական ճաշարանի ծրագրին մասնակցության համար հատկացնել	4819	1200,00	
				Ընդամենը		***-2403,40***	***-2403,40***

2022 թվականի բյուջեի վարչական մասի եկամուտների և ծախսերի փոփոխությունների արդյունքում բյուջեի եկամուտները և ծախսերը կնվազեն 2403,4 հազար դրամով:

ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեի ֆոնդային մասում եկամուտների և ծախսերի նվազեցումների և ավելացումների							
h/h	*բաժին*	*խումբ*	*դաս*	*Գործառական դասակարգում, նպատակ*	*հոդված*	*Ծախսեր Գումարի չափը /հազար դրամ/*	*Մուտքեր /հազար դրամ/*
1				**Սուբվենցիա**			32059,00
2	**01**	**6**	**1**	**Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ.** «Նորամարգ համայնքի կարիքների համար 15,6կվտ ֆոտովոլտային արևային կայանի կառուցում» սուբվենցիոն ծրագրի համար	5112	2911,90	
3	**04**	**2**	**4**	**Ոռոգում.** «Գեղանիստ համայնքի ոռոգման համակարգի կառուցում» սուբվենցիոն ծրագրի համար	5112	583,80	
4	**04**	**3**	**2**	**Գազաֆիկացում.** «Ռանչպար համայնքի գազաֆիկացում» սուբվենցիոն ծրագրի համար	5112	1429,30	
5	**04**	**5**	**1**	**Ճանապարհային տրանսպորտ.** «Այնթապ համայնքի փողոցների հիմնանորոգման և հարթեցման աշխատանքներ 4 կմ» սուբվենցիոն ծրագրի համար	5112	16588,90	
6	**04**	**5**	**1**	**Ճանապարհային տրանսպորտ.** «Գեղանիստ համայնքի 4-րդ փողոցի ասֆալտապատման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագրի համար	5112	295,60	
7	**04**	**5**	**1**	**Ճանապարհային տրանսպորտ.** «Նորաբաց համայնքի Երևանյան փողոցի ասֆալտապատման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագրի համար	5112	567,00	
8	**04**	**5**	**1**	**Ճանապարհային տրանսպորտ.** «Այնթապ գյուղի ճանապարհի հիմնանորոգման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագրի համար	5113	8310,00	
9	**04**	**5**	**1**	«Նորաբացի ճանապարհի հիմնանորոգում» սուբվենցիոն ծրագրի համար	5112	240,00	
10	**06**	**4**	**1**	**Փողոցների լուսավորում.**«Նորաբաց համայնքի արտաքին լուսավորության ցանցի վերակառուցման և արդիականացման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագրի համար	5112	562,50	

11	**06**	**4**	**1**	**Փողոցների լուսավորում**. «Այնթապ համայնքի ներհամայնքային փողոցների լուսավորության անցկացման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագրի համար	5112	570,00	
				Ընդամենը		***32059,00***	***32059,00***

2022 թվականի բյուջեի ֆոնդային մասի փոփոխությունների արդյունքում ընդհանուր եկամուտները և ծախսերը կավելանան 32059,0 հազար դրամով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ն. ՍԱՀԱԿՅԱՆ